ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 հունիսի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

77
(3286)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ–Ն ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ Է ԲԵՐԵԼ

Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները շրջանառության մեջ են դրել օրենքի նախագիծ, որ ՀՀ-ում համապետական ընտրություններին եւ հանրաքվեներին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիություն ունեցող այն անձինք, որոնք ընտրություններին նախորդած մեկ տարվա ընթացքում 6 ամիս բնակվել են ՀՀ-ում: Պատգամավորները որպես հիմնավորում են նշել այն, որ ներկայիս կարգավորումներով ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններին եւ հանրաքվեներին մասնակցելու իրավունքի իրացման համար բացակայում է քաղաքացի-պետություն մշտական կապն արտացոլող որեւէ լուծում (ի տարբերություն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների եւ տեղական հանրաքվեների):

«Պետության հետ քաղաքացու բավարար կապի (պարբերական կապի) տեսության հիմքում, ըստ էության, ընկած է այն ողջամիտ տրամաբանությունը, որ քաղաքացիությունը չի կարող լինել միայն ֆորմալ իրավական կապ, այլ պետք է արտացոլի իրական սոցիալական, տնտեսական եւ կենսագործունեության կապ պետության հետ: Քաղաքացիությունն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ առկա է իրական կապ անձի եւ պետության միջեւ: Ընդ որում, քաղաքացին ստանում է տվյալ պետության կողմից երաշխավորված իրավունքների ամենամեծ ծավալը եւ իրավական պաշտպանության ամենաբարձր աստիճանը, որը տվյալ պետության հետ կայուն կապի բացակայության պայմաններում դառնում է կապի ֆորմալ եւ միակողմանի դրսեւորում: Այս իմաստով, քաղաքացիությունը անհրաժեշտ, բայց ոչ ամենեւին բացառիկ եւ ոչ միակ պայմանն է՝ ժողովրդաիշխանության իրացման հիմնական ձեւերին՝ ընտրություններին եւ հանրաքվեներին մասնակցելու համար: Քաղաքացիությունը թեեւ քաղաքացի-պետություն կապի հիմնական իրավական դրսեւորումն է, սակայն ինքնին քաղաքացիության առկայությունը չի վկայում պետության հետ բավարար կապի առկայության մասին...»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀՀ հաշվեքննիչ պալատը հրապարակել է 2025 թվականի տարեկան հաղորդումը, որտեղ հրապարակել է նաեւ Աշտարակ համայնքապետարանի 2024 թվականի ֆինանսատնտեսական գործունեության հաշվեքննության արդյունքները: Հաշվեքննության նպատակն էր գնահատել համայնքի ֆինանսական հաշվետվությունները որպես մեկ ամբողջություն, ինչպես նաեւ պարզել դրանց համապատասխանությունը գործող իրավական ակտերին եւ քաղաքացիաիրավական գործարքներին: Արդյունքում, ֆինանսական հաշվեքննության շրջանակում տրվել է վերապահումով կարծիք, ինչը, ըստ մասնագիտական ձեւակերպման, նշանակում է, որ հաշվետվություններում առկա են էական թերություններ, սակայն դրանք չեն խեղաթյուրում պատկերը ամբողջությամբ: Միեւնույն ժամանակ, համապատասխանության հաշվեքննության արդյունքներով արձանագրվել է, որ համայնքի ֆինանսատնտեսական գործունեության հսկողական եւ հաշվետվողական համակարգերը ունեն էական բարելավման կարիք: Հաշվեքննիչ պալատի տվյալներով՝ ֆինանսական հաշվետվություններում հայտնաբերվել են շուրջ 1,023,900 հազար դրամի էական խեղաթյուրումներ, որոնք, ըստ եզրակացության, համատարած բնույթ չեն կրում:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Գլխավոր դատախազությունը 2025 թվականի դեկտեմբերի 26-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ Հիմնադրամի, երրորդ անձ՝ ՓԲ ընկերության՝ հողամասի կառուցապատման իրավունքը հարկադիր դադարեցնելու պահանջով: Հակակոռուպցիոն դատարանի 2026 թվականի հունիսի 15-ի վճռով հաստատվել է Գլխավոր դատախազության եւ Հիմնադրամի միջեւ կնքված հաշտության համաձայնությունը, որով Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության տիրապետությանն է վերադարձրել Տավուշի մարզի Դիլիջան համայնքում գտնվող՝ 67 հա մակերեսով «հատուկ պահպանվող տարածքներ» նպատակային եւ «բնապահպանական» գործառնական նշանակությամբ հողամասը: Հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը 4 միլիարդ 578 միլիոն 981 հազար դրամ է (12 միլիոն 436 հազար ԱՄՆ դոլար): Վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

Աշխարհի 500 ամենահարուստ մարդկանց ընդհանուր կարողությունը հունիսի 15-ին մեկ օրում աճել է 336 միլիարդ դոլարով՝ սահմանելով պատմական ռեկորդ: Այս մասին հայտնում է Bloomberg-ը՝ հղում անելով իր Bloomberg Billionaires Index-ին: Գործակալության տվյալներով՝ աշխարհի 500 ամենահարուստ մարդկանց համատեղ կարողությունը հասել է ռեկորդային՝ 13.3 տրիլիոն դոլարի: Ցուցակի առաջատարը շարունակում է մնալ Իլոն Մասկը, որի կարողությունը մեկ օրում աճել է 164 միլիարդ դոլարով: Bloomberg-ի գնահատմամբ՝ սա գրեթե հավասար է ցուցակում ընդգրկված մնացած 499 միլիարդատերերի միասնական օրական աճին: Ավելի վաղ Bloomberg-ը հայտնել էր, որ Իլոն Մասկը դարձել է աշխարհում առաջին մարդը, որի կարողությունը գերազանցել է 1 տրիլիոն դոլարը: Դա տեղի է ունեցել նրա հիմնադրած SpaceX ընկերության բաժնետոմսերի բորսայական առեւտրի մեկնարկից հետո, երբ դրանց գինը հասել էր 163 դոլարի մեկ բաժնետոմսի դիմաց: Bloomberg Billionaires Index-ը հրապարակվում է 2012 թվականի մարտից եւ ներառում է աշխարհի 500 ամենահարուստ մարդկանց կարողությունների վերաբերյալ տվյալներ: Նույն ինդեքսի համաձայն՝ Ռուսաստանի ամենահարուստ գործարարների կարողությունը 2026 թվականի սկզբից աճել է շուրջ 21.8 միլիարդ դոլարով: Ցանկում հայ գործարարներ չկան:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐԸ ԼԻՆԵԼՈՒ ԵՆ ՎՃՌՈՐՈՇ»

ArmLur.am-ը զրուցել է Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Պեդրո Զարոկյանի հետ:

- Ընտրական հանձնաժողովը հրապարակեց ընտրությունների վերջնական արդյունքները, որոնց համաձայն՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը խորհրդարան չի անցնում: Ինչպե՞ս եք գնահատում այս արդյունքները:

- Կարծում եմ՝ տեղի ունեցածը լուրջ հարցեր է առաջացնում ընտրական գործընթացի նկատմամբ վստահության առումով: Շատերի մոտ կա համոզմունք, որ ընտրությունները լիովին ժողովրդավարական չեն եղել, եւ վարչական ռեսուրսների կիրառումը մեծ ազդեցություն է ունեցել արդյունքների վրա:

- Ի՞նչ նկատի ունեք վարչական ռեսուրսներ ասելով:

- Հայաստանում կան տասնյակ հազարավոր պետական ծառայողներ, զինծառայողներ, համայնքային ու պետական համակարգի աշխատակիցներ, որոնց վրա, ըստ բազմաթիվ պնդումների, ճնշումներ են գործադրվել: Ասվում է, որ հատկապես մարզերում մարդկանց սպառնացել են աշխատանքից ազատել, եթե չապահովեն անհրաժեշտ քվեներ: Ընտրություններից հետո էլ արդեն կան տեղեկություններ աշխատանքից ազատումների մասին:

- Այսինքն՝ կարծում եք, որ երկիրը շարժվում է դեպի ավտորիտարիզմ:

- Այո, նման վտանգ ես տեսնում եմ: Երբ պետական համակարգը քաղաքական նպատակներով է օգտագործվում, ժողովրդավարական ինստիտուտները թուլանում են, եւ իշխանությունը սկսում է կենտրոնանալ մեկ քաղաքական ուժի ձեռքում:

- Ի՞նչ պետք է անի ընդդիմությունը ստեղծված իրավիճակում՝ վերցնի՞ մանդատները, թե՞ հրաժարվի դրանցից:

- Իմ կարծիքով՝ ընդդիմությունը պետք է վերցնի մանդատները եւ շարունակի պայքարը Ազգային Ժողովում: Եթե ընդդիմությունը հրաժարվի մանդատներից, իշխանությունն ավելի մեծ ազատություն կստանա իր քաղաքականությունը իրականացնելու համար: Խորհրդարանում ներկայությունը հնարավորություն է տալիս վերահսկողություն իրականացնել եւ բարձրաձայնել խնդիրները:

- Իսկ փողոցային պայքա՞րը:

- Հասարակության մի զգալի հատված արդեն հոգնել է շարունակական փողոցային պայքարից: Դա չի նշանակում, որ քաղաքացիները պետք է լռեն, բայց պայքարի հիմնական ձեւը պետք է լինի իրավական, քաղաքական եւ հանրային վերահսկողության միջոցով:

- Ինչպե՞ս պետք է ընդդիմությունը աշխատի պետական աշխատողների հետ:

- Պետք է նրանց պաշտպանելու մեխանիզմներ ստեղծվեն: Եթե մարդիկ վախենում են աշխատանքը կորցնել քաղաքական դիրքորոշման պատճառով, անհրաժեշտ է իրավական աջակցություն, փաստաբանական պաշտպանություն եւ հանրային ուշադրություն այդ դեպքերի նկատմամբ:

- Ոմանք ասում են, որ ընդդիմությունը բավարար հակակշիռ չի ստեղծում իշխանության համար: Համաձա՞յն եք:

- Եթե ընտրական գործընթացների նկատմամբ վստահություն չկա, ապա միայն ընդդիմության ուժեղ կամ թույլ լինելը բավարար բացատրություն չէ: Սակայն ընդդիմությունը պարտավոր է ավելի կազմակերպված աշխատել, հասարակության հետ կապը պահպանել եւ շարունակաբար վերահսկել իշխանության գործունեությունը:

-Ինչպե՞ս եք պատկերացնում Հայաստանի առաջիկա հինգ տարիները «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության իշխանության պայմաններում:

- Առաջիկա տարիները լինելու են վճռորոշ: Տնտեսության, գյուղատնտեսության եւ արտահանման ոլորտներում արդեն կան խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ են նոր շուկաներ եւ երկարաժամկետ ծրագրեր: Շատ քաղաքացիներ մտահոգված են, որ այս հարցերում բավարար պատրաստվածություն չի ցուցաբերվել:

- Իսկ խաղաղության գործընթացի վերաբերյալ ի՞նչ կարծիք ունեք:

- Խաղաղությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ պետությունն ունի ուժեղ ինստիտուտներ եւ արդյունավետ պաշտպանական համակարգ: Շատերը համոզված են, որ ամուր բանակն ու պետական կարողությունները խաղաղության կարեւոր նախապայմաններն են: Խաղաղությունը միայն հայտարարություններով չի ապահովվում, այն պահանջում է նաեւ ուժեղ պետություն եւ անվտանգային կայուն համակարգ:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԻԿԱ ՔԱՅԼԵՐԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ Կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են արտահանման ոլորտում առկա միտումներն ու առաջիկա քայլերը: Մասնավորապես, ներկայացվել են գյուղատնտեսական եւ այլ արտադրատեսակների արտահանման ծավալները, դիվերսիֆիկացիայի ուղղությամբ իրականացվող քայլերն ու միջոցառումները: Անդրադարձ է կատարվել Եվրոպական միության անդամ եւ այլ երկրներ արտահանման աջակցության ծրագրերի ընթացքին, ներդրվող գործիքակազմերին ու մեխանիզմներին, ֆերմերային տնտեսություններին օժանդակություն ցուցաբերելու գործողություններին: Վարչապետ Փաշինյանն անհրաժեշտ է համարել արտադրողների հետ մշտական կապի պահպանումը՝ արտահանման խթանման միջոցառումները, ծրագրերն ու քայլերը լավարկելու, խնդիրները վեր հանելու եւ անհրաժեշտ լուծումներ գտնելու նպատակով: Այդ համատեքստում, երկրի ղեկավարը կարեւորել է տնտեսության դիվերսիֆիկացմանը միտված գործողությունների հետեւողական իրականացումն ու այդ ուղղութամբ պետություն-մասնավոր հատված սերտ համագործակցությունը:

ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Շվեդիայի Թագավորության արտաքին գործերի նախարար Մարիա Մալմեր Ստենեռգարդի հետ: Շվեդիայի ԱԳ նախարարը շնորհավորել է Արարատ Միրզոյանին ժողովրդավարական բարձր չափանիշներին համապատասխան խորհրդարանական ընտրություններ անցկացնելու եւ հաղթանակի կապակցությամբ: Զրուցակիցները գոհունակությամբ արձանագրել են Հայաստանի եւ Շվեդիայի միջեւ քաղաքական երկխոսության բարձր մակարդակը՝ կարեւորելով տարբեր ոլորտներում փոխշահավետ համագործակցության ընդլայնման ուղղությամբ տարվող աշխատանքները: Անդրադարձ է կատարվել ինչպես երկկողմ օրակարգի հարցերին, այնպես էլ ՀՀ-ԵՄ գործընկերության խորացման հեռանկարներին, այդ թվում՝ Շվեդիայի աջակցությանը Հայաստանում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումներին եւ տնտեսական դիմակայունության ամրապնդմանը: Զրուցակիցներն անդրադարձ են կատարել նաեւ տարածաշրջանային զարգացումներին:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՈՐՈՎ Է ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի որոշմամբ՝ 27-ամյա Արման Անդրիասյանը նշանակվել է քաղաքապետի խորհրդական: Համաղաստասխան որոշմամբ նա ազատվել է քաղաքապետի օգնականի պաշտոնից եւ նույն օրը, իր դիմումի համաձայն, նշանակվել խորհրդականի պաշտոնում:

Արման Անդրիասյանը ծնվել է 1999 թվականի մարտի 6-ին: 2017-2023 թվականներին սովորել եւ ավարտել է Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի «Արվեստի տեսություն, պատմություն եւ կառավարում» ֆակուլտետը: 2017-2019 թվականներին ծառայել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում: Նա դեռեւս 2017 թվականից՝ 18 տարեկանում, անդամակցել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը եւ 2018 թվականի քաղաքական փոփոխություններից հետո ակտիվ ներգրավվել պետական եւ քաղաքական գործընթացներում:

Անդրիասյանի աշխատանքային գործունեությունը հիմնականում կապված է պետական կառավարման համակարգի հետ: 2020-2021 թվականներին նա աշխատել է Ազգային Ժողովում՝ որպես պատգամավորի օգնական: Այնուհետեւ՝ 2021-2023 թվականներին, զբաղեցրել է փորձագետի պաշտոն ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչությունում: 2023-2024 թվականներին նա եղել է վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնականը, իսկ 2024-2025 թվականներին աշխատել է վարչապետի աշխատակազմի արարողակարգի բաժնում՝ որպես խորհրդական, համակարգելով առանձին գործառույթներ:

2025 թվականին Արման Անդրիասյանն ընտրվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության երիտասարդական կառույցի խորհրդի նախագահ: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել կուսակցության քաղաքական գործունեությանը, ներառյալ նախընտրական փուլերում իրականացվող կազմակերպչական եւ քարոզչական աշխատանքները:

Նոր նշանակմամբ Արման Անդրիասյանը կշարունակի իր գործունեությունը Երեւանի քաղաքապետարանում՝ արդեն որպես քաղաքապետի խորհրդական:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՐԱՄՓԸ ՉԻ ՇՏԱՊՈՒՄ ԱՋԱԿՑԵԼ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը զգուշավոր վերաբերմունք է ցուցաբերել Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի առաջարկած ծրագրի նկատմամբ, որը նախատեսում է Հորմուզի նեղուցի ականազերծում եւ միջազգային նավագնացության անվտանգության ապահովում Իրանի հետ ձեռք բերված հրադադարի համաձայնագրից հետո: G7-ի գագաթնաժողովի շրջանակում Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ հանդիպման ժամանակ Թրամփը հայտարարել է, որ մեծածավալ միջազգային ներգրավվածության անհրաժեշտություն չի տեսնում, քանի որ, իր խոսքով, Իրանի հետ ձեռք բերված պայմանավորվածության շնորհիվ նեղուցը շուտով կբացվի եւ անվտանգ կդառնա առեւտրային նավերի համար: «Չեմ կարծում, որ մեզ մեծ օգնություն է պետք: Բայց վատ գաղափար չէ, եթե մի քանի երկրներ մեկ-երկու նավ ուղարկեն տարածաշրջան»,-ասել է Թրամփը՝ դիմելով Մակրոնին:

Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան ամիսներ շարունակ աշխատել են առանձին ռազմածովային առաքելության ծրագրի վրա, որի նպատակն է վերականգնել նավագնացության անվտանգությունը Հորմուզի նեղուցում: Նախաձեռնությունը նախատեսում է ականազերծման աշխատանքներ, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում առեւտրային նավերի ռազմական ուղեկցում:

Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան,- Գերմանիան, Իտալիան, Ճապոնիան եւ ավելի ուշ նաեւ Կանադան համատեղ հայտարարությամբ աջակցել են նախաձեռնությանը՝ ընդգծելով, որ պատրաստ են մասնակցել նեղուցի շուտափույթ վերաբացմանն ու նավագնացության ազատության ապահովմանը: Մակրոնը նշել է, որ Ֆրանսիան պատրաստ է արագ արձագանքել: Նրա խոսքով՝ ֆրանսիական ռազմական ինքնաթիռները կարող են արդեն առաջիկա ժամերին ներգրավվել դիտարկման գործողություններում, իսկ մի քանի օրվա ընթացքում տարածաշրջան կարող են ուղարկվել ֆրեգատներ եւ «Շառլ դը Գոլ» ավիակիրը:

Միաժամանակ ԱՄՆ նախագահը հայտնել է, որ նեղուցում արդեն հայտնաբերվել են ականներ, եւ որոնողական աշխատանքները շարունակվում են: Նրա գնահատմամբ՝ Հորմուզի նեղուցը «արդեն մասամբ բացվել է» նավագնացության համար:

Հիշեցնենք, որ Հորմուզի նեղուցը համաշխարհային էներգետիկ շուկայի կարեւորագույն երթուղիներից մեկն է, որով անցնում է աշխարհում արտահանվող նավթի զգալի մասը:

Ա. Վ.

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ ԵՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը հրապարակել է 2025 թվականի տարեկան հաղորդումը՝ ներկայացնելով պետական բյուջեի կատարման վերաբերյալ իրականացված հաշվեքննությունների արդյունքները: ArmLur.am-ը փորձել է առանձնացնել տարեկան հաղորդման ակնառու կետերը:

Հաղորդման համաձայն՝ 2024 թվականի պետական բյուջեի կատարման ընթացքում արձանագրվել են համակարգային բնույթի մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում են ինչպես ֆինանսական հաշվետվություններին, այնպես էլ պետական կառավարման տարբեր օղակների վերահսկողության մեխանիզմներին:

Հաշվեքննիչ պալատը նշում է, որ հաշվեքննությունների շրջանակում ընդգրկվել է հանրային իշխանության 8 մարմին՝ ընդգրկելով բյուջեի ծախսերի շուրջ 80 տոկոսը: Արդյունքում արձանագրվել է 48 դեպք՝ խեղաթյուրումների, որոնց ընդհանուր ծավալը գնահատվում է շուրջ 3,1 միլիարդ դրամ:

Փաստաթղթում առանձնացվում են մի շարք խնդիրներ՝ ներառյալ ծրագրերի եւ ծախսերի դասակարգման թերությունները, հաշվապահական հաշվառման եւ ֆինանսական հաշվետվությունների անճշտությունները, սկզբնական փաստաթղթերի բացակայությունը կամ թերի ձեւակերպումները, ինչպես նաեւ ներքին հսկողության եւ ներքին աուդիտի համակարգերի անբավարարությունը:

Արձանագրվել են նաեւ գնումների գործընթացներում ընթացակարգային խախտումներ եւ կապիտալ ծրագրերի իրականացման, նախագծման ու տեխնիկական հսկողության համակարգային խնդիրներ: Հաշվեքննիչ պալատը նշում է, որ որոշ խախտումներ կրում են ոչ թե մեկանգամյա, այլ կրկնվող եւ համակարգային բնույթ, ինչը, ըստ կառույցի, պահանջում է պետական ֆինանսների կառավարման մեխանիզմների վերանայում:

Միեւնույն ժամանակ, Հաշվեքննիչ պալատը հիշեցնում է, որ 2024 թվականի պետական բյուջեի վերաբերյալ եզրակացությունը հաստատվել է 2025 թվականի մայիսի 26-ին: Փորձագետների գնահատմամբ՝ արձանագրված խնդիրները կարող են վկայել պետական ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողական համակարգերի թերությունների մասին:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20–ԻՆ

ՌԴ Պետդումայի ընտրությունները տեղի կունենան սեպտեմբերի 20-ին: Վլ. Պուտինը ստորագրել է համապատասխան հրամանագիրը: Ընտրվելու է 450 պատգամավոր, 225-ը՝ միամանդատ ընտրատարածքներում, 225-ը՝ դաշնային ընտրատարածքում: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ առաջիկա ՊետԴումայի ընտրությունները երկրի համար ունեն «չափազանց կարեւոր» նշանակություն եւ հանդիսանում են ներքաղաքական հիմնական իրադարձություններից մեկը:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Նիդերլանդների Թագավորության նորանշանակ արտաքին գործերի նախարար Թոմ Բերենդսենի հետ: Թոմ Բերենդսենը նախարար Միրզոյանին շնորհավորել է խորհրդարանական ընտրությունների՝ ժողովրդավարական չափանիշներին համահունչ անցկացման եւ հաղթանակի կապակցությամբ: Նախարար Միրզոյանն ընդգծել է, որ արդյունքներն արտացոլում են ՀՀ քաղաքացիների ընտրությունն, այդ թվում նաեւ՝ արտաքին համագործակցության հետագա զարգացման տեսանկյունից: - Նախարարները քննարկել են Հայաստանի եւ Նիդերլանդների միջեւ ռազմավարական գործընկերության խորացմանն ուղղված համատեղ աշխատանքները՝ կարեւորելով ընթացիկ եւ նոր ուղղություններով կոնկրետ ծրագրերի իրականացումը: Ընդգծվել է գործարար կապերի խթանման եւ երկկողմ առեւտրի ծավալների ավելացման կարեւորությունը: Արարատ Միրզոյանը ներկայացրել է տարածաշրջանային փոխկապակցվածության զարգացմանը միտված քայլերը, այդ թվում՝ ԹՐԻՓՓ ծրագիրը, ինչպես նաեւ տարածաշրջանում փոխգործակցության խթանման դինամիկան: Նախարար Միրզոյանն ընդգծել է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատված է խաղաղություն եւ շարունակական աշխատանքներն ուղղված են դրա հետագա ամրապնդմանը:

ԸՆԴԼԱՅՆԵԼ Է

Մեծ Բրիտանիայի իշխանությունները Ռուսաստանի դեմ պատժամիջոցների ցանկը ընդլայնել են 43 կետով, այդ թվում՝ սահմանափակումներ 32 կազմակերպության եւ 11 անձի նկատմամբ, ասվում է Արտաքին գործերի նախարարության հայտարարության մեջ: Պատժամիջոցների հիմքում նշվում է «Ռուսաստանի կառավարության գործունեությունից օգուտ ստանալը կամ նրան աջակցություն ցուցաբերելը կառավարության համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտում, մասնավորապես՝ Ռուսաստանի ֆինանսական ծառայությունների ոլորտում գործունեության միջոցով»: Ինչպես նշվել է Լոնդոնում, Մեծ Բրիտանիան դարձել է «առաջին G7 երկիրը, որը պատժամիջոցներ է կիրառել Ռուսաստանի կողմից վերջերս ձեռք բերված մի շարք հեղուկացված բնական գազի նավերի նկատմամբ՝ Arctic LNG 2 նախագիծը սպասարկելու համար, որը նախկինում պատժամիջոցների տակ էր»: Ընդհանուր առմամբ, Մեծ Բրիտանիայի պատժամիջոցների ներքո Ռուսաստանի հետ ենթադրաբար կապված նավերի թիվը գերազանցում է 600-ը: Պատժամիջոցների ցանկում ընդգրկված ընկերությունների բոլոր հնարավոր հաշիվները Մեծ Բրիտանիայում ենթակա են սառեցման, իսկ անհատների վրա նաեւ արգելվում է Մեծ Բրիտանիա մուտք գործելը:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը հայտարարել է, որ երեքշաբթի օրը Մոսկվայում Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի հետ բանակցությունների ընթացքում քննարկել է իրավիճակը Հարավային Կովկասում, ինչպես նաեւ Բաքվի եւ Երեւանի միջեւ ընթացող խաղաղության գործընթացը: «Մենք մանրամասն քննարկեցինք իրավիճակը Հարավային Կովկասում: Քննարկեցինք խաղաղության գործընթացը, որը տեղի է ունենում Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ: Սա տարածաշրջանում խաղաղության հաստատման համար շատ կարեւոր գործոն է»,- Մոսկվայում կայացած մամուլի ասուլիսի ընթացքում հայտարարել է Ֆիդանը:

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ COP17-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՆԳՆ Փրկարար ծառայության եւ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության նախաձեռնությամբ՝ հունիսի 15-ին մեկնարկել եւ մինչեւ 19-ը ՆԳՆ կրթահամալիրում անցկացվելու է «Հանրային միջոցառումների համար միջուկային անվտանգության միջոցառումների մշակման եւ իրականացման» թեմայով ազգային աշխատաժողովը:

Աշխատաժողովին մասնակցում են ՆԳ նախարարության պատասխանատու ստորաբաժանումների, շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ եւ միջազգային փորձագետներ: Աշխատաժողովի առանցքում հոկտեմբերին Հայաստանում ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի անվտանգությունը պատշաճ կազմակերպելու նախապատրաստական աշխատանքներն էին:

Ողջունելով աշխատաժողովի մասնակիցներին՝ ՆԳՆ Փրկարար ծառայության տնօրենի տեղակալ Արթուր Վարդանյանը շնորհակալություն է հայտնել Ատոմային էներգիայի միջազգային գործակալությանը շարունակական աջակցության եւ փորձագիտական ներուժը Հայաստանի գործընկերների հետ կիսելու պատրաստակամության համար: Նրա խոսքով՝ COP17-ի շրջանակում ՆԳ նախարարությունն ունի առանցքային դերակատարում՝ հասարակական կարգի պահպանության, ծառայությունների համակարգման եւ միջուկային անվտանգության ապահովման ուղղություններով:

Քննարկվել են հանրային միջոցառումների ժամանակ միջուկային անվտանգության միջոցառումների պլանավորման, տեխնիկական եւ մարտավարական թիմերի փոխգործակցության, միասնական արձագանքման եւ հաղորդակցության կազմակերպման հարցեր:

Մինչեւ COP17 համաժողովը նախատեսվում են անցկացնել նաեւ գործնական վարժանքներ՝ տարբեր սցենարային իրավիճակներում ծառայությունների արձագանքման կարողությունները զարգացնելու եւ միջգերատեսչական փոխգործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՉԻ ՀԱՃԱԽԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում ավարտվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վանաձորի անտառտնտեսության մասնաճյուղի աշխատակիցների կողմից պաշտոնեական անփութության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վանաձորի անտառտնտեսության մասնաճյուղի անտառապահ Հ.Ղ.-ն 2021 թվականի հունիսի 1-ից մինչեւ 2022 թվականի հունիսի 24-ը պարբերաբար չի հաճախել աշխատանքի, սակայն ստացել է աշխատավարձ, ինչի հետեւանքով դիտավորությամբ հափշտակել է խոշոր չափերի՝ ընդհանուր 1 մլն 515 հզր 805 ՀՀ դրամի չափով վճարված աշխատավարձի գումար:

Բացի այդ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վանաձորի անտառտնտեսության մասնաճյուղի անտառապետ Ա.Ե.-ն պատշաճ հսկողություն չի իրականացրել անտառապահ Հ.Ղ.-ի կողմից աշխատանքի հաճախելու նկատմամբ, ինչի հետեւանքով 2022 թվականի մայիսի 18-ից մինչեւ հունիսի 25-ն ընկած ժամանակահատվածում անտառտնտեսության անտառամասերում ապօրինի հատվել են տարբեր տեսակի ծառեր: Պետությանը պատճառվել է 2 մլն 877 հզր ՀՀ դրամի վնաս:

Հ.Ղ.-ի նկատմամբ հսկող դատախազի որոշմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական անփութությունը) եւ 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (խարդախությունը), իսկ Ա.Յ.-ի նկատմամբ՝ 446-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական անփութությունը): Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ՄԻ ՇԱՐՔ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Դատախազը, պետական շահերի պաշտպանության իր լիազորություններն իրականացնելու շրջանակներում հայտնաբերելով առերեւույթ հանցանքի հատկանիշներ, 2026 թվականի հունիսի 15-ին հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե: Միեւնույն ժամանակ, օտարման գործընթացում հայտնաբերված խախտումների հիմքով՝ դատախազությունը հայցադիմում է ներկայացրել վարչական դատարան՝ Արարատ քաղաքում գտնվող «Ոսկե բանալի» առողջարանի նկատմամբ «Արարատցեմենտ» ՓԲ ընկերության անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն առոչինչ ճանաչելու վերաբերյալ:

ԼՈՒՐԵՐ

476 ՈՉ ՍԹԱՓ ՎԱՐՈՐԴ

Հունիսի 8-ից 15-ը մայրաքաղաքում իրականացված ծառայության ընթացքում Երեւանի պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 6656 խախտում՝ պահպանվող հատուկ տարածք տեղափոխելով 164 ավտոմեքենա: Մասնավորապես, հայտնաբերվել է ոչ սթափ 194 վարորդ, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 158 անձ: Հայտնաբերվել է հաշվառման համարանիշի հետ կապված՝ 23, չամրակապված վարելու՝ 847, առանց մանկական նստատեղի՝ քարսիթի՝ 36, վարելու ընթացքում ծխելու՝ 668, վարելիս հեռախոսից օգտվելու՝ 271, հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու՝ 71 եւ 2210 այլ իրավախախտում: 127 մեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 143-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 168-ը՝ լուսարձակների անսարքությամբ, 55-ը՝ թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով: Բացի այդ, տարբեր կասկածանքներով ձերբակալվել ու Համայնքային ոստիկանության բաժիններ է տարվել 95 անձ:

Նույն ժամանակահատվածում մարզերում պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 19912 խախտում՝ պահպանվող հատուկ տարածքներ տեղափոխելով 277 տրանսպորտային միջոց:

Հայտնաբերվել է ոչ սթափ 282 վարորդ, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 440 անձ: Հայտնաբերվել է նաեւ հաշվառման համարանիշի հետ կապված՝ 73, չամրակապված վարելու՝ 6999, առանց մանկական նստատեղի՝ քարսիթի՝ 346, վարելու ընթացքում ծխելու՝ 738, վարելիս հեռախոսից օգտվելու՝ 869, հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու՝ 104, արագության գերազանցման՝ 2274 եւ 5726 այլ իրավախախտում: 338 ավտոմեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 937-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 491-ը՝ լուսարձակների անսարքությամբ, 235-ը՝ թաղանթապատված դիմապակիով եւ կողային ապակիներով: 16 վարորդ տուգանվել է վարելիս նվագարկչի՝ ստանդարտին չհամապատասխանող լրացուցիչ ուժեղացուցիչներ օգտագործելու համար: Բացի այդ, տարբեր կասկածանքով ձերբակալվել ու Համայնքային ոստիկանության տարածքային բաժիններ է տարվել 44 անձ:

ԱՊՕՐԻՆԻ ԴԵՊՔԵՐ

Համայնքային ոստիկանության Թալինի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հունիսի 11-ին Արագածավան գյուղում հայտնաբերել, ձերբակալել եւ բաժին են տեղափոխել նույն գյուղի բնակիչ 33-ամյա մի երիտասարդի: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող զանգվածով կաթուցիչ՝ ընդհանուր 3,53 գրամ քաշով: Բացատրական աշխատանքի արդյունքում երիտասարդը հայտնել է, որ հայտնաբերվածը թմրամիջոց է, պատրաստել է իր տնամերձ հողամասում աճեցրած կանեփից: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ Արագածավան գյուղի Հոկտեմբերյան խճուղում գտնվող տնամերձ հողամասում հայտնաբերվել է կանեփի 20 բույս: 33-ամյա երիտասարդը տեղափոխվել է ձերբակալվածների պահման վայր: Կատարվում է նախաքննություն:

Թմրանյութ ձեռք բերելու, պահելու եւ օգտագործելու դեպք է բացահայտվել նաեւ Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների արդյունքում: Օպերատիվ տեղեկությունը ստուգելու նպատակով համայնքային ոստիկանները հունիսի 11-ին այցելել են Արեւաշատ գյուղի բնակիչ 52-ամյա տղամարդու բնակության հասցե: Տան բակի ակնհայտ տեսանելի հատվածում ոստիկանները նկատել են կանեփի բույսեր: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ 52-ամյա տղամարդու տան բակում հայտնաբերվել է կանեփի 15 բույս: Տղամարդը հայտնել է, որ կանեփն աճեցրել է անձնական օգտագործման համար թմրամիջոց պատրաստելու նպատակով:Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

Նույն օրը թմրանյութ պահելու, օգտագործելու, ինչպես նաեւ սառը զենք պահելու եւ կրելու դեպք են բացահայտել Համայնքային ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ծառայողները: Ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ժամը 22:50-ի սահմաններում Ռուբինյանց փողոցի հասցեներից մեկի մոտ հայտնաբերվել, ձերբակալվել եւ բաժին են տեղափոխվել Երեւանի բնակիչ՝ 45 եւ 43 տարեկան երկու տղամարդ: 45-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է բարդ փականով ծալովի դանակ, իսկ 43-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ՝ մոխրացած հետքերով կաթուցիչ:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

● *Հանրապետությունում հունիսի 12-ից 15-ը բացահայտվել է 292 հանցագործություն, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՉ ԱԴԵԿՎԱՏ ՎԻՃԱԿՈՒՄ

Տավուշի մարզի զինվորական ստորաբաժանումներում ծառայող սպաներն ասում են, որ 3-րդ բանակային կորպուսի հրամանատար Սիմոն Նազարյանն իրենց վրա ոչ ադեկվատ անձի տպավորություն է թողնում: Նա նույն հարցի վերաբերյալ տարբեր օրերին տարբեր, տրամագծորեն հակառակ տեսակետեր է հայտնում: Սպաներն ասում են, որ Ս. Նազարյանը, մտնելով բանակային կորպուսի զինվորական ստորաբաժանումների զորանոցներ, մատը քսում է տարբեր տեղեր՝ այդպես մաքրություն ստուգելով: 3-րդ բանակային կորպուսի շատ սպաներին թվում է, որ Ս. Նազարյանը հաճախ ինչ-որ նյութերի ազդեցության ներքո է լինում:

ԱՆՏԵՂՅԱԿ

Տավուշի մարզի տեղամասային ընտրական հանձնաժողովների մի քանի նախագահներ լրագրողիս հայտնել են, որ այդ հանձնաժողովների շատ անդամներ, որոնք մեծամասամբ ՔՊ կուսակցության եւ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից են ընդգրկվել տեղամասային հանձնաժողովներում, անգրագետ են, ընտրական օրենսդրության վերաբերյալ տարրական գիտելիքներ չունեն, նրանք հունիսի 7-ին կայացած խորհրդարանական ընտրություններնի ժամանակ իրենց ընտրական տեղամասում դժվարանում էին հանձնաժողովի անդամի իրենց պարտականությունները կատարել: Մինչդեռ այդ անձինք ընտրական օրենսդրության վերաբերյալ դասընթացի են մասնակցել, քննություն հանձնել, ստացել ընտրական հանձնաժողովի անդամ լինելու իրավունք: Անգրագետ, ընտրական օրենսդրությանը չտիրապետող, «յուրային» անձանց իշխանությունը լավություն է արել, դարձրել տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ, որպեսզի նրանք ԱԺ ընտրություններում հանձնաժողովի անդամության համար պետբյուջեից մոտ 70 հազար դրամ գումար ստանան:

ԱՆՏԵՍԵԼԻ ԵՆ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր Հայկ Ղալումյանը մայիսի 8-ից հունիսի 8-ը գտնվում էր նախընտրական քարոզարշավի, արձակուրդի մեջ: Սակայն մարզպետարանի ինտերնետային կայքում տեղադրված են արձակուրդում գտնվող մարզպետ Հայկ Ղալումյանի շնորհավորական ուղերձները դպրոցական Վերջին զանգի, ուսանողների եւ երիտասարդների օրվա, բուժքույրերի միջազգային օրվա, Մայիսի 9-ի առիթներով: Հունիսի 4-ին Տավուշի մարզպետարան հարցում եմ արել. «Հայկ Ղալումյանի շնորհավորական ուղերձները ինչո՞ւ են տեղադրված մարզպետարանի ինտերնետային, պաշտոնական կայքում, երբ նա մարզպետի պաշտոնից մայիսի 8-ից արձակուրդում է գտնվում»: Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին փոխարինող Ասքանազ Բաբլումյանի ստորագրությամբ պատասխանում հարցման մյուս հարցերի պատասխանները կան, իսկ մարզպետի ուղերձների վերաբերյալ հարցն անտեսված է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

G7

ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ

Շվեյցարիայում անցկացվող G7-ի գագաթնաժողովի շրջանակում աշխարհի առաջատար երկրների ղեկավարները շարունակում են սպասել հստակ տեղեկությունների ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ ձեռք բերված նոր համաձայնագրի բովանդակության մասին:

Չնայած ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն արդեն ստորագրել է փաստաթուղթը, դրա մեկուկես էջանոց տեքստը դեռեւս չի հրապարակվել: Արդյունքում, նույնիսկ G7-ի առաջնորդները, որոնք հանդիպել են Թրամփի հետ Ժնեւի լճի ափին կազմակերպված աշխատանքային ընթրիքի ժամանակ, չեն ստացել բավարար պարզաբանումներ համաձայնագրի հիմնական դրույթների վերաբերյալ:

Սպիտակ տանը եւս տարբեր պաշտոնյաներ տարբեր մեկնաբանություններ են տվել փաստաթղթի բովանդակության վերաբերյալ: Մի շարք հարցեր, այդ թվում՝ Հորմուզի նեղուցի ապագա կարգավիճակը, Իրանի միջուկային ծրագրի ճակատագիրը, ինչպես նաեւ Թեհրանի նկատմամբ պատժամիջոցների հնարավոր մեղմացումը, շարունակում են մնալ անորոշ: ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը հայտարարել է, որ տեխնիկական բանակցությունների ընթացքում դեռ պետք է հստակեցվեն Իրանի հարստացված ուրանի պաշարների, ցենտրիֆուգների եւ միջազգային վերահսկողության մեխանիզմների հարցերը: Միեւնույն ժամանակ, Թրամփի վարչակազմը ակնկալում է, որ Պարսից ծոցի երկրները կմասնակցեն Իրանի համար նախատեսվող շուրջ 300 միլիարդ դոլարի վերականգնման հիմնադրամի ֆինանսավորմանը: Այդ հարցը նախատեսվում է քննարկել G7-ի ընդլայնված հանդիպումների ընթացքում, որոնց կմասնակցեն նաեւ Եգիպտոսի, Քաթարի եւ Արաբական Միացյալ Էմիրությունների ներկայացուցիչները: Համաձայնագրի գաղտնիությունը քննադատության ալիք է բարձրացրել նույնիսկ Թրամփի որոշ պահպանողական դաշնակիցների շրջանում, որոնք պահանջում են հրապարակել փաստաթղթի ամբողջական տեքստը՝ հասկանալու համար, թե կոնկրետ ինչ պարտավորություններ են ստանձնել կողմերը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿԱՐՈՂ Է ՏԵՎԵԼ ՄԻՆՉԵՎ 50 ՕՐ

Հորմուզի նեղուցում ականազերծումը այնպիսի մակարդակի, որը թույլ կտա անվտանգ նավարկություն, կարող է տեւել 40-ից 50 օր: Այս մասին հայտնել է Reuters-ը՝ հղում անելով արեւմտյան ծովային անվտանգության ընկերությունների աղբյուրներին: Նրանք ընդգծել են, որ միայն այդ դեպքում ապահովագրական ընկերությունները, նավագնացության օպերատորները եւ նավթային ընկերությունները կհամարեն, որ տարածքով անցումը բավականաչափ անվտանգ է նավագնացությունը վերսկսելու համար: Գործակալությունը գրում է, որ սովորական ականազերծող սարքերի եւ բարդ ստորջրյա անօդաչու թռչող սարքերի միջոցով ականազերծման համար անհրաժեշտ մի քանի շաբաթները, տեսականորեն, կարող են հետաձգել տասնյակ միլիոնավոր բարել նավթի մատակարարումը շուկա: Ավելի վաղ ԱՄՆ-ի, Իրանի եւ Պակիստանի պաշտոնյաները, որը հանդես է գալիս որպես միջնորդ, հաստատել են Վաշինգտոնի եւ Թեհրանի միջեւ համաձայնագիրը: Այն նախատեսվում է ստորագրել Ժնեւում հունիսի 19-ին: Իրանի փոխարտգործնախարար Քազեմ Ղարիբաբադիի խոսքով՝ կողմերը մտադիր են, ի թիվս այլ հարցերի, քննարկել Իրանի միջուկային ծրագիրը 60-օրյա հրադադարի ընթացքում: Ավելին, Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի կողմից ծովային շրջափակումը, ինչպես սպասվում է, կավարտվի հունիսի 15-ին, ինչպես նաեւ բոլոր ճակատներում, այդ թվում՝ Լիբանանում, ռազմական գործողությունների անհապաղ եւ մշտական դադարեցումը:

Համաձայնագրի վերաբերյալ մեկնաբանություն անելով՝ Միջազգային ծովային կազմակերպության գլխավոր քարտուղար Արսենիո Դոմինգեսը հայտարարել է Պարսից ծոցում հայտնված հազարավոր ծովայինների տարհանումը սկսելու պատրաստակամության մասին, սակայն ընդունել է, որ այս ծրագրի իրականացումը ժամանակ կպահանջի՝ բոլոր անհրաժեշտ անվտանգության երաշխիքներն ապահովելու համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին G7 երկրների առաջնորդների հետ հանդիպումից հետո շնորհակալություն է հայտնել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին եւ գործընկեր պետությունների ղեկավարներին: Այդ մասին նա գրել է իր Telegram ալիքում: Հանդիպմանը մասնակցել են նաեւ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերը, Իտալիայի վարչապետ Ջորջա Մելոնին, Կանադայի վարչապետ Մարկ Քարնին, Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Մերցը, Ճապոնիայի վարչապետ Սանա Տակաիչին, ինչպես նաեւ Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը եւ Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիու Կոշտան: Զելենսկին նշել է, որ առաջնահերթ հարցերն են հակաօդային պաշտպանության հրթիռների մատակարարումների ավելացումը, դրանց արտադրության արտոնագրերի տրամադրումը, ձմեռային աջակցության փաթեթը եւ Ռուսաստանի նկատմամբ ճնշման ուժեղացումը: Ավելի վաղ Ուկրաինայի նախագահը հայտնել էր, որ առաջարկել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին հանդիպում անցկացնել G7 գագաթնաժողովի շրջանակում, սակայն Կրեմլը հայտարարել էր, որ պաշտոնական հրավեր չի ստացել:

● *Ըստ վիճակագրության՝ ՀՀ-ում հունիսի 12-ից 15-ը գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 2 դեպք:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

2026թ.-ի հունիսի 13-ից 15-ը Հայաստանում անցկացվել է ճապոնական ավանդական երաժշտության միջոցառումների շարք՝ տեղացի հանդիսատեսին ներկայացնելու ճապոնական երաժշտական մշակույթը եւ խթանելու Ճապոնիայի ու Հայաստանի միջեւ մշակութային փոխանակումը: Հունիսի 13-ին Երեւանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի է ունեցել ճապոնական ավանդական երաժշտության համերգ: Ծրագրում հանդես են եկել ճապոնացի երաժիշտներ, այդ թվում՝ պարոն Ջումպեյ Օցուկան՝ շո գործիքով, որը համարվում է Ճապոնիայի հնագույն ավանդական երաժշտական գործիքներից մեկը, պարոն Կոկի Նակամուրան՝ ցուգարու շամիսենով, ինչպես նաեւ պարուհի տիկին Յոշիկա Սավաիրին՝ ճապոնական ավանդական պարով, եւ պարոն Տակահիրո Ակիբան՝ դաշնամուրով: Համերգի կարեւորագույն պահերից մեկը ճապոնացի եւ հայ երաժիշտների համատեղ ելույթն էր: Հայկական մեղեդիները հնչեցին ճապոնական գործիքներով՝ հայկական ավանդական գործիքների՝ դուդուկի ու քանոնի ուղեկցությամբ՝ ներկայացնելով երկու երկրների երաժշտական ավանդույթները մեկ ընդհանուր ծրագրում: Համատեղ ծրագրում ընդգրկված էին «Հոյ Նազան», «Նազանի եւ Բրոյի», «Ալագյազ եւ Խնկի ծառ» սիրված հայկական մեղեդիները, ինչպես նաեւ «Արքայադուստր Մոնոնոկե» անիմեից հայտնի սաունդթրեքը: Համերգին ներկա էր շուրջ 450 հանդիսատես:

Հունիսի 14-ին Հիկարի կենտրոնում անցկացվեց ավելի փոքր համերգ, որը հնարավորություն ընձեռեց երեխաներին, երիտասարդներին եւ այլոց ծանոթանալ ճապոնական ավանդական երաժշտությանը:

Հունիսի 15-ին Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջում կազմակերպվեց ճապոնական ավանդական երաժշտությանը նվիրված դասախոսություն-համերգ: Ուսանողները ծանոթացան ճապոնական երաժշտական գործիքներին, դրանց պատմությանն ու առանձնահատկություններին, ինչպես նաեւ հնարավորություն ունեցան ինքնուրույն նվագելու փորձեր կատարել:

Միջոցառումները հայ հանդիսատեսին ճապոնական ավանդական երաժշտությունը ճանաչելու հնարավորություն ընձեռեցին եւ նպաստեցին Ճապոնիայի ու Հայաստանի միջեւ մշակութային փոխանակմանն ու փոխըմբռնմանը:

SOTHEBY'S

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԿԳՄՍ նախաձեռնությամբ հունիսի 14-17-ն աշխատանքային այցով Երեւանում են գտնվում Լոնդոնի հեղինակավոր «Sotheby's» աճուրդային տան ներկայացուցիչները: Այցի հիմնական նպատակն է ստեղծել արդյունավետ համագործակցային եւ մասնագիտական կապեր Հայաստանի մշակութային կազմակերպությունների եւ աճուրդային տան միջեւ:

ԿԳՄՍՆ-ից NEWS.am-ին հայտնում են, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է Լոնդոնի «Sotheby's» աճուրդային տան Եվրոպայի, Մերձավոր Արեւելքի եւ Աֆրիկայի տարածաշրջանային ղեկավար Ալինա Դեյվիին, Մերձավոր Արեւելքի եւ Հնդկաստանի տարածաշրջանային նախագահ Էդվարդ Գիբսին:

Հանդիպմանը մասնակցել են ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը եւ «Մշակույթի զարգացման» հիմնադրամի տնօրեն Կարեն Ավետիսյանը: Քննարկվել են մշակութային աճուրդների ոլորտում Հայաստանում իրականացվող բարեփոխումները, միջազգային համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

Ողջունելով հյուրերին՝ նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ ՀՀ կառավարության ծրագրով եւ ՀՀ մշակույթի պահպանության, զարգացման եւ հանրահռչակման 2023-2027 թթ. ռազմավարությամբ մշակույթի տնտեսականացումն ու հանրային կյանքում մշակույթի դերի բարձրացումն առաջնային թիրախներ են: Նա տեղեկացրել է՝ նախորդ տարի ընդունվել է «Մշակութային աճուրդների կազմակերպման մասին» ՀՀ օրենքը, որի նպատակն է կանոնակարգել արվեստի շուկայում ձեւավորվող տնտեսական հարաբերությունները, խթանել արվեստի պատկերասրահների, աճուրդային տների եւ արվեստագետների միջեւ համագործակցային միջավայրի ձեւավորումը, ինչպես նաեւ նպաստել ոլորտի թափանցիկ եւ մրցունակ զարգացմանը: Նախարարի խոսքով՝ օրենքի մշակման ընթացքում մանրամասն ուսումնասիրվել են միջազգային առաջատար փորձը եւ ոլորտի կարգավորման մեխանիզմները, մասնավորապես՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի եւ Հունաստանի օրինակներով, ինչպես նաեւ միջազգային հեղինակավոր աճուրդային տների գործունեության ընթացակարգերը:

Ժաննա Անդրեասյանն ընդգծել է, որ պետությունը հետեւողական քայլեր է ձեռնարկում միջազգային հեղինակավոր աճուրդային տների հետ համագործակցության ուղղությամբ, ինչը կնպաստի Հայաստանի դիրքերի ամրապնդմանը եւ վարկանիշի բարձրացմանն արվեստի միջազգային շուկայում: Նրա խոսքով՝ Հայաստանը կարող է մշակութային աճուրդների, արվեստի շրջանառության եւ միջազգային մասնագիտական համագործակցության զարգացման տարածաշրջանային կարեւոր հարթակ հանդիսանալ՝ հաշվի առնելով մեր երկրի հարուստ մշակութային ժառանգությունը, ստեղծարար ներուժը եւ մշակութային քաղաքականության ոլորտում իրականացվող բարեփոխումները:

ԿԳՄՍ նախարարը ներկայացրել է նաեւ «Ակադեմիական քաղաք» ծրագիրը՝ տեղեկացնելով, որ ակադեմիական քաղաքի արվեստների կլաստերի ձեւավորման նպատակով համագործակցություն է հաստատվել միջազգային հեղինակավոր բուհերի, այդ թվում՝ Լոնդոնի արվեստների համալսարանի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ համագործակցության հնարավոր ուղղությունները, այդ թվում՝ մասնագիտական վերապատրաստումների, փորձի փոխանակման եւ կարողությունների զարգացման ծրագրերի իրականացմամբ:

Քննարկվել են նաեւ հայ ժամանակակից արվեստագետների, երիտասարդ ստեղծագործողների եւ արվեստի նոր ուղղությունների ներկայացուցիչների ներգրավման հեռանկարները միջազգային աճուրդային եւ ցուցադրական հարթակներում՝ նպաստելով նրանց ճանաչելիության բարձրացմանն ու միջազգային շուկաներում ներկայացմանը:

Լոնդոնի «Sotheby's» աճուրդային տան ներկայացուցիչները բարձր են գնահատել մշակութային աճուրդների ոլորտում Հայաստանում իրականացվող օրենսդրական եւ ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ ընդգծելով, որ դրանք կարեւոր նախադրյալներ են միջազգային համագործակցության զարգացման եւ տարածաշրջանում մրցունակ արվեստի շուկայի ձեւավորման համար:

Ներկայացնելով աճուրդային տան գործունեության հիմնական ուղղությունները՝ նրանք վերահաստատել են Հայաստանի հետ համագործակցության պատրաստակամությունը, այդ թվում՝ հայկական մշակութային ժառանգությանը վերաբերող բացառիկ նմուշների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման եւ հնարավոր ձեռքբերման գործընթացներին աջակցելու ուղղությամբ:

Այս համատեքստում մասնավորապես նշվել է, որ վերջերս ՀՀ կառավարությունը Լոնդոնում կազմակերպված միջազգային աճուրդից ձեռք է բերել բացառիկ հայկական մշակութային արժեք համարվող 1188 թվականին պատրաստված եկեղեցու քանդակազարդ փայտյա դռան փեղկը, որը տեղափոխվել է Հայաստան:

Կողմերը կարեւորել են համագործակցության շարունակականությունը եւ վստահություն հայտնել, որ միջազգային փորձի ներգրավումը, մասնագիտական կարողությունների զարգացում կնպաստեն Հայաստանում մշակութային աճուրդների կայացմանը, ոլորտի միջազգային ճանաչելիության բարձրացմանը եւ տարածաշրջանային համագործակցության հնարավորությունների ընդլայնմանը: Լոնդոնի «Sotheby's» աճուրդային տան ներկայացուցիչներն այցի շրջանակում նախատեսում են խորհրդատվական հանդիպումներ հայաստանի թանգարանների ղեկավարների հետ՝ քննարկելու համագործակցության զարգացմանն առնչվող հարցեր:

ՄԻՆՉԵՎ 30% IDCOIN

Գ

Ամռան առաջին օրերից ակտիվանում է «ճամպրուկային տրամադրությունը»: Ոմանք պլանավորում են ծովափնյա արձակուրդ, մյուսներ՝ բացահայտում Հայաստանի բնությունը, իսկ շատերն էլ նախընտրում են հանգստանալ քաղաքում: Հանգստի որ տարբերակն էլ որ ընտրեք, մի բան հաստատ է՝ ամառվա ամենաաղահանջված վայրերից են լողավազանները:

Զրային հանգիստը ամառն անփոխարինելի բաղադրիչներից է: Այն լավագույն միջոցն է թե՛ ակտիվ լողի սիրահարների, թե՛ պարզապես լիցքաթափվել ցանկացողների համար: Իսկ ի՞նչ կասեք, եթե մի լավ հանգստանալու հետ մեկտեղ կուտակեք նաեւ idcoin-ներ: Իդրամն ու IDBank-ը ուրախ են ներկայացնել իրենց ամառային idcoin-առատ արշավը:

Արշավի շրջանակում 2026 թվականի հունիսի 15-ից օգոստոսի 31-ը ներառյալ, կատարելով QR վճարումներ հետեւյալ լողավազաններում՝ կստանաք մինչեւ 30% ակնթարթային idcoin, արշավի պայմաններով սահմանված կարգով, սակայն յուրաքանչյուր օրացուցային ամսվա համար ոչ ավելի, քան 10.000 idcoin (հարկումից հետո).

«Քրոսս» սպորտային համալիրի լողավազան
«Դիլի թաուն» ռեզորթի լողավազան
«Դիլիջանի տուն» հյուրանոց՝ «Գարուն» լողավազան
«Հիլլս» սպորտային համալիրի լողավազան
«Լանջ» ռեստորանի լողավազան
«Մուլտի վելնես կենտրոն» մարզաառողջարարական համալիրի լողավազան
«Պրեզիդենտ» հյուրանոցի լողավազան
«Սան մարկո» լողավազան
«Ջեն» լողավազան

Իսկ մնացածը շատ պարզ է. պարզապես ընտրեք ձեր նախընտրած լողավազանը, վերցրեք արեւապաշտպանն ու արեւային ակնոցը եւ վճարումները կատարեք Idram&IDBank հավելվածով:

Ընկերությունները վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

EUROSATORY 2026

ՓԱՐԻԶՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանի գլխավորած պատվիրակությունը Ֆրանսիայի զինված ուժերի եւ վետերանների հարցերով նախարար Կատրին Վոտրենի հրավերով Ֆրանսիայում է՝ մասնակցելու Փարիզում հունիսի 15-ին մեկնարկած պաշտպանական տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսին՝ «Eurosatory 2026»-ին:

Նախարարության աջակցությամբ հայկական ռազմարդյունաբերական ոլորտի 30 կազմակերպություն (18-ը՝ որպես ցուցադրող, 12-ը՝ որպես այցելու) «Eurosatory 2026»-ին մասնակցում է մեկ միասնական տաղավարով՝ միջազգային հարթակում ներկայացնելով հայկական արտադրական եւ գիտահետազոտական ներուժը: Հայ-ֆրանսիական տեխնոլոգիական գործընկերությունը նոր թափ է ստացել այս տարվա մայիսի 5-ին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի՝ Հայաստան կատարած պաշտոնական այցից հետո: Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության եւ Ֆրանսիայի Հանրապետության պաշտպանության նախարարության միջեւ ստորագրված հուշագիրը նոր հնարավորություններ է բացել երկու երկրների համար, եւ այս այցը հիշյալ պայմանավորվածությունների գործնական մեկնարկն է:

1967 թվականից անցկացվող միջոցառումն այս տարի մեկտեղել է ավելի քան 2300 ընկերություն աշխարհի 66 երկրից, 42 ազգային ներկայացուցչական տաղավարով: Միջոցառման շրջանակում նախատեսվում է ավելի քան 120 պանելային քննարկում եւ ցուցադրություն: Օրակարգի առանցքում են ռազմարդյունաբերության, անօդաչու համակարգերի, հետախուզական տեխնոլոգիաների եւ արդիական սպառազինության, կիբեռանվտանգության, արհեստական բանականության ոլորտներում համագործակցության հեռանկարները, ինչպես նաեւ ոլորտի զարգացման միտումներն ու մարտահրավերների հաղթահարման նորարարական լուծումները:

Նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը ՀՀ կառավարության օրակարգային առաջնահերթություններից է: «Eurosatory 2026» հեղինակավոր միջոցառումը մեր երկրի համար աննախադեպ հնարավորություն է՝ ռազմարդյունաբերության ոլորտում միջազգային կապերի հաստատման, արտադրական ու գիտահետազոտական կարողությունների ընդլայնման, ինչպես նաեւ արտաքին շուկաների ուսումնասիրության համար:

Այցի շրջանակում՝ մինչեւ հունիսի 19-ը, նախարար Մխիթար Հայրապետյանը Ֆրանսիայում կունենա մի շարք աշխատանքային հանդիպումներ՝ ֆրանսիական գերատեսչությունների եւ ռազմարդյունաբերական ոլորտի ղեկավարների հետ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈՐ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶԻՉ

Ֆրանսիացի մասնագետ Էրվե Ռենարը, ով նախկինում գլխավորում էր Սաուդյան Արաբիայի ազգային թիմը, նշանակվել է Թունիսի հավաքականի գլխավոր մարզիչ: Այս մասին պաշտոնապես հայտարարել է Թունիսի ֆուտբոլի ֆեդերացիան, հայտնում է armsport-ը:

ԱԱ-2026-ի խմբային փուլի առաջին խաղում Թունիսի ընտրանին 1:5 հաշվով ջախջախիչ պարտություն էր կրել Շվեդիայի հավաքականից, ինչից հետո թիմի նախկին գլխավոր մարզիչ Սաբրի Լյամուշին հեռացվել էր զբաղեցրած պաշտոնից:

«Թունիսի ֆուտբոլի ֆեդերացիան հայտարարում է Էրվե Ռենարին ազգային հավաքականի գլխավոր մարզիչ նշանակելու մասին՝ մինչեւ 2026 թվականի աշխարհի առաջնության ավարտը: Նա իր պարտականությունների կատարմանը կանցնի արդեն այսօր: Համաձայնագիրը նաեւ նախատեսում է բանակցությունների սկիզբ աշխարհի առաջնությունում ելույթներն ավարտելուց հետո՝ հստակ մարզական նպատակների վրա հիմնված երկարաժամկետ համագործակցության շուրջ»,- նշված է ֆեդերացիայի մամուլի ծառայության տարածած պաշտոնական հաղորդագրության մեջ:

Հավելենք, որ Թունիսի հավաքականն ԱԱ-2026-ի շրջանակներում իր հաջորդ հանդիպումը կանցկացնի հունիսի 21-ին՝ ուժերը չափելով Ճապոնիայի ազգային թիմի հետ:

ԳՈՒՄԱՐ ԿՍՏԱՆԱ

Կատալոնական «Բարսելոնան» ավելի քան 1 մլն եվրո կստանա Լոնդոնի «Չելսիի» 27-ամյա պաշտպան Մարկ Կուկուրելյայի՝ Մադրիդի «Ռեալ» տեղափոխությունից: Այս մասին հայտնում է իսպանական Mundo Deportivo պարբերականը, գրում է armsport-ը: ՖԻՖԱ-ի գործող կանոնակարգի համաձայն՝ ֆուտբոլիստի տրանսֆերային ընդհանուր արժեքի 5%-ը որպես համերաշխության վճար բաշխվում է այն ակումբների միջեւ, որոնք իրենց լուման են ունեցել խաղացողի կրթման եւ զարգացման գործում: Այս կանոնի կիրառման արդյունքում կատալոնական ակումբի բյուջեն կհամալրվի 1,35 մլն եվրոյով: Մարկ Կուկուրելյան կատալոնական հռչակավոր «Լա Մասիա» ակադեմիայի սան է: Նա վեց տարի (14-ից մինչեւ 20 տարեկան) անցկացրել է «Բարսելոնայի» երիտասարդական համակարգում, ինչի շնորհիվ ակումբը դարձել է այս տրանսֆերից փոխհատուցում ստացող հիմնական կողմերից մեկը:

Նշվում է, որ բացի «Բարսելոնայից», համապատասխան վճարումներ կստանան նաեւ իսպանական «Էսպանյոլն» ու «Խետաֆեն», ինչպես նաեւ անգլիական «Բրայթոնը»:

Հիշեցնենք, որ ավելի վաղ Մադրիդի «Ռեալը» պաշտոնապես հայտարարել էր Մարկ Կուկուրելյայի տրանսֆերի մասին. մադրիդյան ակումբը գործարքի համար վճարել է 60 մլն եվրո: Ներկայումս ֆուտբոլիստը գտնվում է Իսպանիայի ազգային հավաքականի ճամբարում եւ մասնակցում է 2026 թվականի աշխարհի առաջնությանը:

ՅԱՄԱԼԸ ՀԱՆԳՍՏԱՑՐԵԼ Է

Աշխարհի 2026 թվականի առաջնությունում Կաբո-Վերդեի հեռ սենսացիոն ոչ-ոքիից (0:0) հետո Իսպանիայի հավաքականի ճամբարում ամենաքննարկվող թեմաներից մեկը Լամին Յամալի վիճակն էր: Վնասվածքից աղաֆինված եւ դաշտ վերադարձած «Բարսելոնայի» եզրային հարձակվողը խաղից անմիջապես հետո շտապել է հանգստացնել բոլորին, գրում է armsport-ը:

SPORT պարբերականի հետ կարճ զրույցում Յամալը հայտարարել է. «Ամեն ինչ կատարյալ է»՝ հստակեցնելով, որ իրեն լավ է զգում եւ ոտքի հատվածում ոչ մի ցավ չի զգացել: Այս կարճ, բայց հուսադրող արտահայտությունը զգալիորեն թոթափեց լարվածությունն Իսպանիայի հավաքականի գլխավոր աստղերից մեկի շուրջ: Սա չափազանց կարեւոր նորություն էր թիմի համար, հատկապես այն ֆոնին, որ հանդերձարանում տրամադրությունն ամենեւին էլ բարձր չէր:

Խաղից հետո երիտասարդ ֆուտբոլիստների դեմքերին ակնհայտ հիասթափություն էր նկատվում: Գավին, Նիկո Ուիլյամսն ու Դանի Օլմոն իրենց ժեստերով ցույց էին տալիս, թե որքան ծանր են ընդունել մեկնարկային տուրում միավորների կորուստը: Այս բարդ պահին հենց Լամին Յամալն իր վրա վերցրեց ոչ պաշտոնական առաջնորդի դերը՝ փորձելով բարձրացնել թիմակիցների մարտական ոգին:

Դրական տրամադրվածություն էր փորձում պահպանել նաեւ դարպասապահ Ունսի Սիմոնը, ով հիշեցրեց, որ Աշխարհի առաջնությունը երկար մրցաշար է, եւ պետք է արժանին մատուցել մրցակցին, որը բարձր մակարդակի ֆուտբոլ ցուցադրեց: Սիմոնը հանդես եկավ որպես փորձառու առաջնորդ՝ կոչ անելով չկենտրոնանալ այս գայթակղության վրա:

Հանդիպումից հետո լրագրողների հետ շփման խառը գոտում վերջինը հայտնվեց Մարկ Կուկուրելյան: Պաշտպանն այնքան ուշ դուրս եկավ, որ մադրիդյան մամուլի ներկայացուցիչները (ովքեր հիմնականում լուսաբանում են «Ռեալն» ու ազգային հավաքականը) արդեն հեռացել էին: Մադրիդի «Ռեալի» կողմից նրա տեղափոխության պաշտոնական հայտարարությունից հետո կատալոնացի ֆուտբոլիստը գլխավոր թիրախում էր, սակայն նա հմտորեն «շրջանցեց» մամուլին՝ հավանաբար գիտակցելով, որ այժմ գլխավորն Աշխարհի առաջնությունն է, իսկ ակումբային ֆուտբոլը պետք է մի կողմ դնել:

Մինչ իսպանացիները վերլուծում էին սխալները, Կաբո-Վերդեն տոնում էր: «-Կապույտ շնաձկները» ոչ-ոքին նշում էին այնպես, կարծես տիտղոս էին նվաճել: Խաղավերջում նրանք պատվո շրջան կատարեցին մարզադաշտում՝ արժանանալով տրիբունաների մեծ մասի ծափահարություններին: Գլխավոր հերոսն, իհարկե, 40-ամյա դարպասապահ Վոզինյան էր:

Արժանի է հիշատակման նաեւ Իսպանիայի գլխավոր մարզիչ Լուիս դե լա Ֆուենտեի պահվածքը: Նա արժանապատվորեն ընդունեց արդյունքը՝ առանց ավելորդ էմոցիաների եւ հրապարակային քննադատության, եւ անմիջապես ջերմորեն գրկախառնվեց Կաբո-Վերդեի մարզչի հետ: Դե լա Ֆուենտեն դեռ խաղից առաջ զգուշացրել էր, որ այս թիմը կարող է դառնալ մրցաշարի գլխավոր հայտնություններից մեկը:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հունիսի 28-ին՝ ժամը 18:00-ին, կկայանա «Գայանե» բալետը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞վ ենթակա չէ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի:

Աբգար Սարգսյան, 71 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. 1) Պարտադիր զինվորական ծառայության ենթակա չէ այն քաղաքացին, որը նախկինում դատապարտվել է ազատազրկման՝ ծանր կամ առանձնապես ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորությամբ կատարած հանցագործության համար եւ ազատազրկման ձեւով պատիժ է կրել երեք տարուց ոչ պակաս ժամկետով, կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 139-րդ կամ 142-րդ կամ 266-րդ կամ 272-րդ կամ 327.2-րդ կամ 327.3-րդ կամ 327.5-րդ կամ 362-րդ հոդվածով կամ 363-րդ հոդվածի 2-րդ եւ (կամ) 3-րդ մասերով նախատեսված արարքներ կատարելու համար:

2) Հայտարարված զորակոչի ժամանակ պարտադիր զինվորական ծառայության չի կարող զորակոչվել այն անձը, որը պատիժ է կրում ազատազրկման կամ կալանքի ձեւով, կամ որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, բացառությամբ քաղաքացու նկատմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափելու պատճառով հարուցված քրեական հետապնդման, եթե քաղաքացին գրավոր ցանկություն է հայտնել զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության:

ՀՀ ՊՆ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը ինչպե՞ս է պահվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ ի՞նչ է խորհրդանշում:

Արմինե Գալստյան, 65 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում աջ ձեռքի պատկերով պահվում է Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը, ճկույթ մատի կամ ձեռքի մեկ այլ մասունքներով: Սաղմոսների եւ մարգարեությունների մեջ աջ ձեռքն Աստծո ստեղծագործ ուժի պահպանության եւ շնորհաբաշխության աղբյուրն է: Այն նաեւ Աստծո հրաշագործության խորհրդանիշն է: Ս. Գրիգոր Լուսավորչի միջոցով Աստված Իր հրաշագործ ներկայությունը բերեց մեր կյանքում: Այն խորհրդանշում է նաեւ եկեղեցու մեջ Աստծո ներկայությունը: Դրա համար զանազան առիթներով՝ մանավանդ Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված տոնին, Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը թափորով բերվում է եկեղեցի՝ ժողովրդի բարեպաշտական հարգանքին եւ աղոթքներին մասնակից լինելու համար: Սուրբ Մյուռոնի օրհնության ժամանակ Աջով խառնում են Սուրբ Մյուռոնը: Ըստ ավանդության՝ դրան հաջորդում է Սուրբ Մյուռոնի եռալը՝ խորհրդանշելով Սուրբ Հոգու շնորհների առատ բաշխումը հավատացյալներին:

Հայ առաքելական սուրբ եկեղեցի

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Խոշոր ավտովթար Կոտայքի մարզում. «Reno» մակնիշի աղբատար բեռնատարը բախվել է ճանապարհի թույլատրելի հատվածում կայանված «Lincoln»-ին. վերջինը հայտնվել է ծառերի մեջ, կան վիրավորներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 6 + 10 + 21 + 26
Կոտայքի լեռներ	+ 7 + 10 + 21 + 24
Կոտայքի նախալեռներ	+ 15 + 18 + 26 + 28
Գեղարքունիք	+ 6 + 10 + 20 + 24
Լոռի	+ 8 + 12 + 22 + 24
Տավուշ	+ 11 + 13 + 26 + 29
Արագածոտնի լեռներ	+ 5 + 8 + 19 + 23
Արագածոտնի նախալեռներ	+ 13 + 18 + 24 + 29

Արարատ	+ 15 + 18 + 29 + 32
Արմավիր	+ 15 + 18 + 30 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 7 + 10 + 21 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 14 + 18 + 30 + 34
Սյունիքի լեռներ	+ 7 + 10 + 20 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 13 + 24 + 27
Սյունիքի հովիտներ	+ 16 + 20 + 29 + 33
Երեւան	+ 16 + 18 + 29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*